

Հ. Ս. ԲԱԴԱԼՅԱՆ

Ա Ր Ե Գ Ա Կ Ի

Է Ն Ե Ր Գ Ի Ա Յ Ի Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Ո Ւ Մ Ը

621-47 | 7318
12-16 | Енгелумий, З.
Чиркешск. национальный
общественный институт

5n

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆԻ ՍՍՀԱԴՐԱՄԱՆ

621.47
F-16

Հ. Ա. ԲԱԴՈԼՅԱՆ

ԱԾՈՒՀԿԱՆ Հ 1561 թ.

ԱՐԵԳԱԿԻ

ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ



Հ 17261

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՈՒՔԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1946

ԱՐԵԳԱԿԸ ՈՐՊԵՍ ԷՆԻՐԳԻԱՅԻ ԱՂՔՑՈՒՐ

Արեգակը մի հսկայական շիկացած գաղային մարմին է և հանդիսանում է՝ չափազանց մեծ քանակությամբ ճառագայթային էներգիայի աղբյուր, որն անընդհատ ճառագայթում է իր շրջակա տարածության, ինչպես և մեր Երկրի վրա Երկրի վրա գոյացուն ունեցող ամբողջ էներգիայի միակ աղբյուրը զրկվելու հանդիսանում է Արեգակը, որի շնորհիվ իրկրի վրա գոյացուն ունի լույս, ջերմություն, կյանք և այլն։ Այս առթիվ արժե հիշել գետես անցյալ գարի վերջիրին ակագեմիկոս Տիմիրյաղեղի գրած հետեյալ նշանակալից տողերը.

«Դա գրեթե միակ ուժն է, որ մարդն օգտագործում է իրեն նպատակների համար, իրոք, բացի ծովային մակընթացության ուժից, որն օգտագործվում է Եվրոպայի մի քանի նավահանգիստներում և որը կախված է Լուսնի (և Արեգակի) ձգողական ուժից, մնացած բոլոր շարժիչները, ուժի մյուս բոլոր աղբյուրները, ուղղակի կամ անուղղակի կերպով կախված են Արեգակի ճառագայթային ուժից...»:

Ակնհայտ է, որ ներկայումս օգտագործվող էներգիայի հիմնական ուսուրաները, օրինակ՝ քարածությը, նավթը, էլեկտրականությունը և այլն, Արեգակի ճառագայթային էներգիայի դարսվոր ազգեցության արգյունք են։ Արեգակի ճառագայթային էներգիան Երկրի վրա կինդանական և բռնական կյանքի գոյացության ամենահմենական գործոնն է, առանց որի մեր մոլորակի վրա կենդանական և բռնական աշխարհ չէր լինի»

Արեգակի էներգիայի մեծության մասին ընդհանուր գծերով պատկերացում ունենալու համար բավական է հիշատակել որ միջմոլորակային տարածության մեջ Արեգակի ճառագայթային էներգիայից ամբողջ Երկրին բաժին է հասնում միայն նրա

1
22., 10⁹ մասը: Այստեղից պարզ երևում է, թե որքան մեծ պետք է լինի Արեգակի ճառագայթային ամբողջ էներգիան:

Հաշվումները ցույց են տալիս, որ մեկ տարում Արեգակից Երկրին հասած ճառագայթային էներգիան կազմում է մասավորագույն 1,34.10²⁴ փոքր կալորիա, որի կարողությունը հավասար է 180.10¹² կիլովատի:

Այդ էներգիայի մեծ մասը, մինչև Երկրի մակերևույթին հասնելը, կլանվում է մթնոլորտում. Երկրի մակերևույթին հասնում է միայն 80.10¹² կիլովատ, որի մեծ մասն ընկնում է Երկրի ջրային մակերևույթի վրա, իսկ ավելի փոքր մասը՝ 17.10¹² կիլովատը՝ ցամաքի վրա: Երկրի ցամաքային մակերևույթի վրա ընկած էներգիայի որոշ մասը, որ կլանվում է բուսականության կողմից, 25.10⁹ կիլովատից ավելի չէ:

Ժամանակակից մարդկությունն օգտագործում է Արեգակի ճառագայթային էներգիայի՝ բույսերի կողմից կլանվող 25 միավարդ կիլովատից մոտավորապես 36.10⁸ կիլովատ:

Այսպիսով, քանի որ Երկրի վրա կյանքի գոյության միակ աղբյուրը, ինչպես ասացինք, հանդիսանում է Արեգակի ճառագայթային էներգիան, ապա միանգամայն բնական ու հասկանալի, թե Արեգակի գործունեության ուսումնասիրությունը և հատկապես ճառագայթային էներգիայի օգտագործումը ինչպիսի խոշոր ու կարենոր նշանակություն ունի ժողովրդական տնտեսության համար: Արեգակի ճառագայթային էներգիայի օգտագործման հարցով մարդկի վաղուց են սկսել հետաքրքրվել ու զրադվել, սակայն միայն վերջին 30 տարվա ընթացքում կատարված հետազոտություններն են ավել զգալի արգյունքներ:

Երկրի միավոր մակերևույթին հասնող Արեգակի ճառագայթային էներգիայի քանակությունը կախված է հետեւյալ հիմնական գործոններից. 1. Արեգակի ճառագայթման ունակությունից, 2. Երկրի մթնոլորտի թափանցկությունից, 3. ճառագայթների անկրան անկյան մեծությունից և 4. Երկրի ու Արեգակի միջև եղած հեռավորության փոփոխումից:

Էներգիայի այն քանակությունը, որը 1 ամ² մակերեսն ստանում է մեկ րոպեում, երբ այդ մակերեսն Արեգակի ճառագայթների նկատմամբ ուղղահայց գիրք է ունենում Երկրի

մթնոլորտի վերին ստհմանում, Երկրի և Արեգակի միջին հեռավորության դեպքամ կոչվում է արեգակին հաստատուել:

Քանի վոր Արեգակից հասնող էներգիան կախված է թվարկված գործոններից, ապա Արեգակի հաստատունը որոգը կապված է գմբարությունների ու բարդությունների հետ:

Արեգակի ճառագայթները մթնչե մեզ հասնելն անցնում են Երկրի մթնոլորտի շերտով, դրա շնորհիվ դեպի մեզ եկող ճառագայթների որոշ մասը ցըլում և կլանվում է մթնոլորտի կողմից: Մթնոլորտի թափանցկությունը կախված է լույսի ցրման և կլանման պրոցեսներից: Եթե կլանումը և ցրումը քիչ են, թափանցկությունը մեծ է լինում, իսկ եթե ցրումը և կլանումը շատ են, թափանցկությունը փոքր է լինում: Բացի այդ՝ ճառագայթների կլանումը կախված է նաև այն ճանապարհի երկարությունից, որ ճառագայթներն անցնում են մթնոլորտում: Օրինակ՝ երբ Արեգակի ճառագայթներն ուղղահայաց դիրքով են ընկնում Երկրի մակերեսույթի վրա, այսինքն հորիզոնական հարթության հետ կաղմում են 90° անկյուն, կամ, կարելի է ասել, երբ Արեգակը տվյալ վայրի համար գտնվում է զենիթում, մաքսիմում ջիրմություն է ստացվում, որովհետեւ այդ դեպքում ճառագայթները մթնոլորտում կարճ ճանապարհ են անցնում: Իսկ երբ փոքր անկյամբ են ընկնում, այսինքն, երբ Արեգակը հորիզոնի նկատմամբ փոքր բարձրություն է ունենում, ավելի փոքր չերմություն է ստացվում, որպիսին վերջին դեպքում ճառագայթները մթնոլորտում ավելի երկար ճանապարհ են անցնում, որի հետևանքով ճառագայթների կլանումն ու ցրումն ավելի մեծ չափով է կատարվում:


Երկրին հաօնող արեգակնային ռադիացիայի ու Արեգակի հորիզոնից ունեցած բարձրության միջնական կապը գտնելու և Արեգակի հաստատունը որոշելու համար պետք է ընտրել այնպիսի պարզ օր, որ մթնոլորտն անփոփոխ թափանցկություն ունենա, որպիսի հնարավորություն ընդհանրապես հազվագյուղ է պատահում:

Որ իրոք Երկրի միավոր մակերեսն ավելի մեծ քանակությամբ էներգիա է ստանում այն դեպքում, երբ ճառագայթներն ուղղահայաց դիրքով են ընկնում և ավելի փոքր՝ երբ թեք, այդ կարելի է ցույց տալ հետեւալ կերպով:

Ենթադրենք AB հարթության վրա երեք տարրեր թեքությամբ ընկնում է 1 մ կտրվածք ունեցաղ Տ ճառագայթային հոսք: Բնական է, որ ուղղահայաց ընկնելու գեպքում ստացված ամրող էներգիան բաշխվում է 1 մ մակերեսի վրա (տես առաջին զիրք, գծագիր 1):

Երկրորդ գեպքում, երբ նույն Տ ճառագայթային հոսքն 90°-ից փոքր անկյամբ է ընկնում, ստացած էներգիան բաշխվում է ավելի մեծ մակերեսի վրա, հետևապես այս գեպքում միավոր մակերեսի ստացած էներգիան ավելի փոքր է լինում (տես երկրորդ զիրք):

Երրորդ գեպքում դարձյալ նույն Տ ճառագայթային հոսքն ավելի փոքր անկյամբ ընկնելու՝ ստացած էներգիան բաշխվում է ե՛լ ավելի մեծ մակերեսի վրա; որը երեսն է գծագրից, ոյսինքն այս գեպքում միավոր մակերեսն ե՛լ ավելի փոքր քանակությամբ ճառագայթային էներգիա է ստանում:



Այսպիսով, հարթության վրա ընկնող Արեգակի ճառագայթային էներգիայի քանակը, ճառագայթների տարրեր թեքությունների գեպքում, կարելի է որոշել հետեւյալ բանաձևի միջոցով.

$$I = I_0 \sin\varphi,$$

որտեղ I -ն՝ ճառագայթային էներգիան է՝ արտահայտված կալորիաներով:

I_0 — ճառագայթային էներգիան է, ճառագայթներն ուղղահայաց ընկնելու գեպքի համար:

φ — հարթության և ճառագայթների ուղղության միջև կազմված անկյունն է:

Պարզաբանենք օրինակներով:

Ենթադրենք $I_0 = 1.70$ կալորիայի, այն դեպքի համար, եթե $\varphi = 90^\circ$ (այսինքն ճառագայթներն ուղղահայաց ընկնելու դեպքում): Նշանակում է՝ $I = \frac{I_0}{\sin 90^\circ} = 1.70$.

Այժմ որոշենք այն դեպքի համար, եթե $\varphi = 30^\circ$, $\sin 30^\circ = \frac{1}{2}$:

$I = 1.70 \times \frac{1}{2} = 0.85$ կալորիա:

Որոշենք նաև ճառագայթները 20° -ի անկյամբ ընկնելու դեպքում:

$I = 20^\circ, \sin 20^\circ = 0.34$:

$I = 1.70 \times 0.34 = 0.58$ կալորիա:

Արեգակի հաստատումը որոշելիս պետք է նկատի ունենալ նույն Արեգակի ու Երկրի միջև եղած հեռավորության փոփոխությունը, որը նույնպես որոշ չափով ազդում է արեգակի ճառագայթների լարվածության վրա: Քանի որ Երկիրը բոլորիւմ է Արեգակի շուրջը էլիպսաձև օրինակով, որի ֆոկուսներից մեկում գտնվում է Արեգակը, ապա դրա հետևանքով տարվա ընթացքում անընդհատ, պարբերաբար փոփոխվում է նրանց միջև եղած հեռավորությունը: Երկիրն արեամերձ (պերիհելի) կետում եղած ժամանակ, որ տեղի է ունենաւմ մոտավորապես հունվարի 1-ին, ունենում է $147.000.000$ կմ հեռավորություն, իսկ արեամեռ (ափհելի) կետում եղած ժամանակ, որ տեղի է ունենում մոտավորապես հունիսի 30-ին, ունենում է մաքսիմում հեռավորություն՝ $152.000.000$ կմ, այսինքն տարվա ընթացքում Արեգակի ու Երկրի միջև եղած հեռավորությունը փոփոխվում է $5.000.000$ կմ: Այսպիսով, Արեգակի հաստատունի վերաբերյալ տարվա տարբեր ժամանակներում ստացված մեծություններն իրար հետ համեմատելու համար, դիտումների ժամանակ պետք է հաշվի առնել Արեգակի և Երկրի ունեցած հեռավորության փոփոխությունը և հաստատունի մեծությունը հաշվել միջին հեռավորության համար: Արեգակի հաստատունի մեծությունը միջին հեռավորության համապատասխան դարձնելու համար պետք է չափավոծ ճառագայթների լարվածությունը որոշ տոկոսով մեծացնել կամ փոքրացնել Բնական է, որ միջին հեռավորությունից փոքր հեռավորության դեպքում Արեգակի որոշված հաստատունը պետք է պակասացնել, իսկ հեռու եղած դեպքում՝ ավելացնել: Օրինակ,

Հունվարի 1-ի համար Արեգակի որոշված հաստատունը Արեգակի և Երկրի միջին հեռավորության համար հաշվելիս պետք է պահանջնել մոտավորապես $3,4^{\circ}/_0$ -ով, իսկ հուլիսի 1-ի համար՝ ավելացնել $3,5^{\circ}/_0$ -ով:

Արեգակի հաստատունը որոշելու կամ ընդհանրապես Արեգակի գործունեությունն ուսումնասիրելու ուղղությամբ 20-րդ դարում խոշոր աշխատանքներ է կատարել Սմիտոնի հնատիտուար (Ամերիկա): Այդ նպատակի համար Ամերիկայում և Երկրագնդի մյուս վայրերում կառուցվել են մի շարք ակտինոմետրական կայաններ և ինստիտուտներ, այն հաշվով, որ հնարավոր լինի անընդհատ դիտումներ կատարել այսինքն որոշ ակտինոմետրական կայանների համար Արեգակը մայր մտնելիս՝ մյուսների համար ծագի, կամ որոշ կայաններում ամպամած լինելու դեպքում մյուսներում պարզ լինի:

Արեգակի հաստատունը առաջին անգամ 1837 թվականին սըրշել է Պուլը (Ֆրանսիայում), որից հետո տարբեր երկրներում և տարբեր ժամանակներում շատերն են զբաղվել այդ հարցով: Սակայն արժե է իշխատակիլ, որ այդ ասպարեզում, սկսած 1907 թվականից, Ամերիկայում նշանակալից աշխատանք են կատարել Աբբոտն ու իր աշխատակիցները:

Մեր Միության մեջ այդ ուղղությամբ նույնպես խոշոր աշխատանքներ են կատարվում: Տարբեր վայրերում գոյություն ունեն մի շարք ակտինոմետրական ինստիտուտներ, կայաններ և աստղադիտարաններ, որոնք սիստեմատիկ կերպով գիտահետազոտական ուսումնասիրություններ են կատարում Արեգակի հաստատունը որոշելու վերաբերյալ Ալուցիում (Լինինգրադի մոտ) խոշոր աշխատանք է կատարել Ն. Կալիտինը:

Ներկայումս Արեգակի հաստատունի միջին մեծությունն ընդունված է հաշվել 1.94° փոքր կալորիխա:

Արեգակի հաստատունի վերաբերյալ վերջին տարիներում մի քանի հեղինակների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները զետեղված են հետեւալաղյուսակում (տես եջ 9):

Այժմ, բնականաբար, կարող է հարց ծագել, թե այդ աղյուսակում Արեգակի հաստատունի վերաբերյալ բերված մեծություններն իրոք հաստատին են, թե այս կամ այն չափով փոփոխվում են:

Ընդհանրապես պետք է ասել, որ ակաբինոմետրական դիտումների միջոցով ստացված՝ Արեգակի հաստատունի մեծությունը գործնականում կարելի է ընդունել գրեթե անփոփոխ, եթե հաշվի չառնենք այն հանգամանքը, որ Արեգակի գործունեության պարբերական փոփոխման հետևանքով՝ որոշ չափով փոփոխվում է նաև Արեգակի հաստատունը:

Աղյուսակ 1.

Հեղինակ	Տարեթիվ	Արեգակի հաստատունը
Աբբոս	1912	1,93
Ֆունդ	1915	1,93
Կալտին	1919	1,93
Ֆեսենկով	1931	1,95

Արեգակի ռադիացիայի պարբերաբար փոփոխվելը կախված է նրա մակերևույթի վրա առաջացող արևարձերի քանակի պարբերական փոփոխումից: Արևարձերի և Արեգակի հաստատունի երկարատև ու համատեղ ուսումնասիրությունից պարզվել է, որ արևարձերի քանակի մեծացման զուգընթաց սկզբնական շրջանում Արեգակի հաստատունը նույնպես սկսում է մեծանալ հասներով մաքսիմում մեծության, բայց հետո, չնայած բժերի քանակի մեծացմանը, Արեգակի հաստատունն սկսում է նորից փոքրանալ: Դա կարելի է բացատրել նրանով, որ, չնայած արևարձերի քանակի աճման ժամանակ Արեգակն ավելի ակտիվ գործունեություն է ունենում, բայց մյուս կողմից էլ բժերի բռնած մակերեսը համեմատաբար ավելի փոքր ճառագայթման ունակություն է ունենում, որի շնորհիվ որոշ չափով սկսում է փոքրանալ Արեգակի հաստատունը: Այսպիսով, Արեգակի հաստատունի փոփոխությունը կազմված է բժերի քանակի փոփոխության հետ, որ նույնպես տեղի է ունենում պարբերաբար:

Այս բոլորից հետո ավելորդ չենք համարում տալ այդ ուղղղությամբ Տաշքենդում կատարված փորձերի արդյունքները:

Համաձայն Տաշքենդի Գեոֆիզիկական դիտարանի ակտի-

Նոմենտրական բաժնի կատարած երկարատև ռւսումնասիրությունն ների՝ մեկ քառակուսի մետրի վրա Արեգակի ճառագայթային էներգիայից ստացված ջերմության գումարը, ճառագայթներն ուղղահայաց և հորիզոնական դիրք ունենալու դեպքում (ռւթարված տվյալների միջինը), արտահայտված մեծ կալորիաներով, գետեղված է հետեւյալ աղյուսակում.

Աղյուսակ 2

I	II	III	IV	V	VI
79256	87973	124978	164550	221900	260055
36950	48459	79694	114109	160249	177970

VII	VIII	IX	X	XI	XII	ԳՈՒՄԱՐԸ
269773	263262	213201	171907	112405	66823	2025383
178449	176209	126209	128334	91487	51457	1275658

Աղյուսակի առաջին տողում գետեղված է մեկ քառակուսի մետր մակերեսի ստացած ջերմության տարեկան միջին գումարը ճառագայթների նկատմամբ ուղղահայաց դիրք ունենալու դեպքի համար, իսկ երկրորդ տողում՝ հորիզոնական, որն առաջինի նկատմամբ մոտավորապես երկու անգամ փոքր է: Եթե ըբերված աղյուսակից երևում է, որ տարվա ընթացքում Արեգակից ստացված ջերմության քանակն ըստ ամիսների առավելագույն չափի է հասնում հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին, իսկ մինիմում չափի՝ դեկտեմբեր և հունվար ամիսներին, այնուհետև տարվա ընթացքում միջին թվով մեկ քառակուսի մետր սակերեսի վրա, ճառագայթները ուղղահայաց ընկնելու դեպքում, ստացվում է 2.000.000 մեծ կալորիա ջերմություն, իսկ հորիզոնական դիրքով ընկնելու դեպքում՝ մոտավորապես 1.300.000 մեծ կալորիա:

Այժմ հետաքրքրական է այդ տվյալները համեմատել որևէ վառելանյութից ստացված ջերմության քանակի հետ: Օրինակ, 2.000.000 մեծ կալորիա ջերմություն ստանալու համար պահանջվում է ծախսել մոտավորապես 300 կիլոգրամ քարածուխու Խոչպես տեսնում ենք, Արեգակից Երկրի շատ փոքր մասի ստացած ճառագայթային էներգիան անհամեմատ մեծ է, բայց մյուս կողմից էլ, ինչպես տեսանք, դեռևս շատ աննշան մասն է օգտագործվում, ընդորում շատ ձեռնուու է արհետական եղանակով կուտակել Արեգակի ճառագայթային էներգիա և օգտագործել ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում, որպես էներգիայի նոր աղբյուր:

Պատմական ընդհանուր ակնարկ Արեգակի էներգիայի օգտագործման մասին

Մարդկի, իրենց գոյության առաջին իսկ օրից, օգտվել են Արեգակի էներգիայից: Ամենավաղ ժամանակաշրջանից սկսած մեր նախնիները կարիք են զգացել բնակության այնպիսի վայրեր ընտրել, որոնք հարմար լինեն Արեգակից օգտվելու և արեկի տակ հացահատիկներ, մրգեր, մորթիներ չորացնելու համար: Բայց ի այդ՝ հետագայում սկսել են զբաղվել նաև Արեգակի ճառագայթային էներգիան առանձին սարքերի օգնությամբ կուտակելու եղանակով օգտագործելու հարցով:

Պատմում են, որ հնում, ըստ մեզ հասած առասպելների, Հռոմի Վեստի տաճարի լույսերը քողարկված կերպով վառում էին Արեգակի էներգիան կենտրոնացնող սարքերի միջոցով և դա համարում էին «մաքուր երկնային կրակ», ժողովրդին հավատացնելով, որ, իբր թե, տաճարների լույսերը երկնքի կրակով են վառվում: Բացի այդ, ավանդաբար մեզ է հասել նաև այն առասպելը, որ, իբր թե, 1214 տարի մեր թվականությունից առաջ, ականավոր գիտնական Արքիմեդը, հայելիների հատուկ սարքավորումով այրել է հռոմեական նավատորմը, իբ հայրենի քաղաքը՝ Սիրակուղը նրանց ներխուժելու ժամանակ: Պատմում են նաև այն մասին, որ բժիշկները վերքեր բուժելու համար օգտագործել են ջրով լիքը ապակե գնդեր, որոնք, ըստ երեսույթին, տաքացրել են նույնպես Արեգակի էներգիայով:

Արեգակի էներգիայի օգտագործման վերաբերյալ ավելի կոնկրետ նշանակություն ունեցող փորձեր են կատարվել սկսած 18-րդ դարի կեսերից:

Սյդ շրջանից սկսած Արեգակի էներգիայի օգտագործման ռասումնասիրությունը զարգացել է երկու հիմնական ուղղությամբ.

1. Արեգակի ճառագայթային էներգիայի՝ որպես ջերմության ուղղակի օգտագործման,

2. Արեգակից ստացոծ ճառագայթային էներգիան մեխանիկական աշխատանքի փոխարկելու, այսինքն շարժման մեջ դնելու, այսպես կոչված, արեգակնային շարժիչներ ստեղծելու ուղղությամբ:

Արեգակի էներգիան, որպես ջերմություն, ուղղակի կերպով օգտագործելու նկատմամբ կատարվել են հետևյալ ռասումնասիրությունները. Փրանսիացի բնագետ Բյուֆֆոնը (1707—1788) Արեգակի էներգիան կենտրոնացնելու նպատակով պատրաստել է 360 հարթ հայելիներից կազմված մի բարդ սարք, իսկ 1747 թվականին 128 սփերիկ հայելիներից պատրաստած սարքի սիջոցով նրան հաջողվել է 50 մետր հեռավորության վրա վառել փայտը, 45 հայելու միջոցով 6,5 մետր հեռավորության վրա հալել 3 կիլոգրամ անագույնույն թվականին նրան հաջողվել է ստանալ ավելի բարձր ջերմաստիճան, որով 10 մետր հեռավորության վրա հալել է մետաղներ, 68 մետր հեռավորության վրա այրել է ծառեր, նաև բարձր ջերմություն է ստացել հայելիներից պատրաստած սարքի կիզակետում, հայելիներին այնպիսի դասավորություն է տվել որ բոլորի կիզակետն ստացվել է մոտավորապես նույն տեղում:

Արեգակի ջերմությունը կուտակելու և ուղղակի կերպով օգտագործելու հիմնագիրը կարելի է համարել շվեյցարական բնագետ Սայսուրին, որի կատարած փորձերը համեմատաբար ավելի գործնական նշանակություն են ունեցել նաև 1766 թ., Արեգակի էներգիան օգտագործելու համար, պատրաստել է այսպես կոչված «տաք արկղ»:

Նա պատրաստել է ապակե պատերով իրար մեջ մտնող մի քանի արկղներ, որտեղ ջերմությունը կուտակվելով՝ հասել է մոտ

88⁰, իսկ արկղը 20 բոպեն մեկ անգամ Արեգակի ուղղությամբ հարմարեցնելու հետևանքով ստացել է մոտ 109⁰:

Ավելի բարձր ջերմաստիճան՝ ստանալու նպատակով նա փորձն ավելի է կատարելագործել Արկղում կուտակվող ջերմությունը շրջապատին չհաղորդվելու համար փորձը կատարել է մետաղե արկղում, որի միայն դեպի Արեգակն ուղղված կողմն է մետաղից աղատ եղել բացի այդ, արկղի մետաղե պատերը դրսի կողմից մեկուսացրել է նաև ջերմության վատ հաղորդիչ նյութերով։ Այդպիսով նրան հաջողվել է արկղի ներսում ջերմությունը բարձրացնել մինչև 160⁰:

Սույուրի կատարած փորձերը ցույց են տվել, որ հաջող արգյունք է ստացվում երկու կամ երեք ապակե շերտ եղած դեպքում։ Նա եկել է այն եղակացության, որ այդ սկզբունքով կարելի է պատրաստել ջուր՝ տաքացնելու և ճաշ պատրաստելու հարմարանք, այսինքն Արեգակի ճառագայթային էներգիան փոխարկել ջերմացին էներգիայի՝ առանց ճառագայթները հայելիների և սապնյակների օգնությամբ կուտակելու։ Շատերն այդ սկզբունքով մի շարք փորձեր են կատարել որոնք գործնական նշանակություն են ունեցել։ Օրինակ՝ 1837 թ. Զ. Զերգելը կարմիր փայտից պատրաստել է մի արկղ, որի ներսը սև սևացրել է, իսկ փերելը, դեպի Արեգակն ուղղված կողմը ծածկել ապակիով և դրել ապակե պատերով արկղում և պատերի միշտ եղած տարածությունը լցրել ավաղով։ Այդ եղանակով դեկտեմբերի 5-ին, ժամը 13-ն անց 57 բոպեին ջերմաստիճանը հասցըրել է մինչև 120⁰։ Նա իր պատրաստած արկղն անվանել է «վառարան», որի մեջ հաջողվել է ձու եփել և նույնիսկ միս տապակել։

Այդ տեսակետից հիշատակելի է նաև Աղամսի կատարած փորձը։ Նա 1878 թվականին Հնդկաստանի Բոմբեյ քաղաքում պատրաստել է արեգակնային խոհանոց և ճաշ եփել։ Այդ նպատակի համար Արեգակի էներգիան նա օգտագործել է հետեւյալ կերպով։ Վերցրել է կոնսալտ ուժիւկտոր՝ կազմված 8 արձաթազօծ ապակիներից, որոնք Արեգակի ճառագայթներն անդրադարձրել են ապակիով ծածկված պղնձե կաթսայի վրա, այլ կերպ ասած, կաթսան զտնվել է ուժիւկտորի կիզակետում, և այդպիսով հաջողվել է ճաշ եփել Բոմբեյում ամենացուրտ ժամանակ,

հուշարձն, Արեգակի էներգիայով երկու ժամվա ընթացքում մտով և բանջարեղենով 7 բաժին ճաշ է պատրաստել զինվորների համար: Բացի այդ՝ պատրաստել է նաև այլ տեսակ ճաշեր և, ինչպես հաղորդել է նա, այդ եղանակով պատրաստված ճաշերն ավելի համեղ են եղել քան սովորական եղանակով պատրաստվածները:

Ավելի հետաքրքրական են Արբոտի կատարած փորձերը: Նա երկար տարիներ զբաղվել է արեգակնային խոհանոց պատրաստելու հարցով: 1910 թվականին Մառնատ-Վիլսոնի (Ամերիկա) աստղադիտարանում հայելիների միջոցով պատրաստել է արեգակնային խոհանոց, միշտ ուղղված դեպի Արեգակը, որտեղ ջերմությունը հասել է 90°: 1915 թ. ավելի բարձր ջերմություն է ստացել՝ մինչև 130°, իսկ 1927 թ. պատրաստել է ավելի կատարելագործված արեգակնային խոհանոց, որտեղ ջերմությունը հասել է մինչև 170° և հնարավոր է եղել պատրաստել ամեն տեսակի ճաշեր:

«Տաք արկղի» սկզբունքով պատրաստել են նաև ջուր թռելու հարմարանք: Հայտնի է, որ 1926 թվականին պլուֆեսոր Մորեն և Բրազեն Փարիզում պատրաստել են «Տաք արկղ» ներսի կողմում տեղափորված մետաղ ու թիթեղ, որի միջոցով սեպտեմբեր ամսին մի քառակուսի մետր տաքացնող ապակե մակերեսն օրվա ընթացքում տվել է մինչև մեկ լիտր թորած ջուր: Ավելի մոտ անցյալում Ժ. Ժինեստուսը պատրաստել է Արեգակի էներգիայի միջոցով ջրից աղ ստանալու հարմարանք, այսպես կոչված աղջտիչ ապարատ: Դրա համար նա վերցրել է ներսը սեպացրած փայտե հարթ արկղ, վերևի կողմը որոշ թեքությամբ ապակիով ծածկված, որի մեջ ջուրը գոլորշիանալով, միաժամանակ ստացվել է աղ և թորած ջուր:

Արեգակի էներգիայի վերաբերյալ վերջին տասնամյակում Միջին Ասիայում ավելի ակտուալ ու արդյունավետ ուսումնասիրություն է կատարել Կ. Տ. Տրոֆիմովը: Նա պատրաստել է ջուր տաքացնելու, եռացնելու, մրգեր չորացնելու, աղի ջրեր թորելու հաջող սարքեր, Արեգակի էներգիայով աշխատող ջրմուղ մեքենաներ և այլն: Բացի այդ, նա փորձեր է կատարել Արեգակի էներգիան ցուրտ և ամպամած ժամանակ օգտագործելու ուղղությամբ: Դա հատկապես մեծ նշանակություն ունի ջերմոցներում

զանադան տեսակի բույսեր ցրտից պաշտպանելու համար Զմեռ ժամանակ, իր օդի ջերմությունը եղել է՝ 5° և լրիվ ամպամած, նրան հաջողվել է ստանալ $45 - 65^{\circ}$ ջերմություն:

Կ. Տ. Տրոֆիմովի փորձերի հիման վրա Տաշքենդում և Միջին Ասիայի այլ վայրերում պատրաստված են արեգակնային բաղնիքներ, արեգակնային չորանոցներ և այլն:

Արժե հիշատակել նաև այն, որ 1890 թվականին ոռւս աստղաբաշխ Ցերասկին Մոսկվայում հայելիների կիզակետում ստացել է 3500° ջերմություն, և նրան հաջողվել է հալել գրեթե բուլոր տեսակի մնաւալները, իսկ 1923 թվականին Ամերիկայում Մոբոն, հայելիներից և ոսպնյակներից պատրաստած փորձի միջոցով, 1 ոմ մակերեսի վրա ստացել է մինչև 5.000° ջերմություն:

Այսպիսով, Արեգակի էներգիայի ուղղակի օգտագործումը զարգացել է ինչպես բարձր, այնպես էլ ցածր ջերմություն ստանալու ուղղությամբ: Ցածր ջերմություն ստանալու հղանակն օգտագործվում է արեգակնային բաղնիքներ, չորանոցներ պատրաստելու և այլ նպատակների համար, իսկ բարձր ջերմություն ստանալու եղանակը՝ որոշ մետաղներ հալելու համար:

Մի քանի խօսք էլ արեգակնային շարժիչների մասին:

Ինչպես ասացինք, Արեգակի էներգիան կարելի է օգտագործել նաև որոշ մեքենաներ՝ արեգակնային շարժիչներ աշխատեցնելու համար: Սակայն, չնայած այդ ուղղությամբ բավական երկար ժամանակ է, ինչ մարդկան զբաղվում են և մի շարք տարբեր տիպի արեգակնային շարժիչներ են պատրաստված, բայց և այնպես դեռևս դորձնականորեն հաջող արդյունքներ չեն ստացվել:

Բնդիանը ապես Արեգակի էներգիայի օգտագործումն ավելի ակտուալ նշանակություն ունի հատկապես այն երկների կամ շրջանների համար, որոնք աղքատ են էներգիայի մյուս ռեսուրսներից՝ նավթից, քարածուխից, գետերից, անտառներից և, բացի այդ, փոխադրական միջոցների տեսակետից դժվարություններ կան: Արեգակի էներգիայի օգտագործման հարցն այս կամ այն չափով զարգացել է այդպիսի երկրներում՝ Միջին Ասիայում, Հյուսիսային Աֆրիկայում և այլն: Սակայն սրանից չպետք է հետեւ կանոնավոր է արեգակի էներգիան պետք է օգտագործել միայն այդպիսի երկներում, այլ այն բոլոր երկրներում, որտեղ կլո-

մայական պայմաններն այդ նպատակի համար նպաստավոր են, Արեգակի էներգիայի օգտագործման հնարավորությունն ու նշանակությունն ավելի քան մեծ է սոցիալիստական պլանաչափ անտեսության մեջ կիրառելու համար:

Արեգակի ճառագայթային էներգիայից կարելի է ստանալ՝ էլեկտրական էներգիա, քիմիական էներգիա, ջերմային էներգիա և մեխանիկական աշխատանք:

Մինչև հրմա հաջողվել է Արեգակի ճառագայթային էներգիան օգտագործել միայն ջերմություն ստանալու և մեխանիկական աշխատանք կատարելու համար, որոնք որոշ վայրերում, ինչպես վերևում ասացինք, գործնական կիրառություն ունեն: Հետևաբար մենք համարու կերպով կիսունք Արեգակի ճառագայթային էներգիայից մի շարք նպատակների համար ջերմություն ստանալու և մեխանիկական աշխատանքներ կատարելու եղանակների մասին:

Արեգակի էներգիայի օգտագործումը ջուր տաքացնելու համար

Արեգակնային ջրատաքացման սիստեմը բաղկացած է երեք հիմնական մասներ՝ կաթսա, մեկուսիչներ և շարժիչ մեխանիզմ (եթե սիստեմը շարժական է):

1. Կաթսան արեգակնային ջրատաքացման սիստեմի այն հիմնական մասն է, որտեղ տաքանում է ջուրը: Կաթսայի մի կողմից ներս է հոսում սառը ջուրը և տաքանալով, մյուս կողմից արտահոսում է: Կաթսան սովորաբար լինում է հարթ և խողովակաձե, այնպիսի արամագծով, որ ջրի հաստությունը եռացնելու համար լինի ոչ ավելի 12 միլիմետրից, իսկ տաքացնելիս՝ ոչ ավելի 25 միլիմետրից: Ավելի հաջող արդյունք ստանալու համար պետք է կաթսան ունենա սկ գույն, որպեսզի մաքսիմում չափով կլանի Արեգակից ստացած ճառագայթային էներգիան: Կաթսան պետք է պատրաստել այնպիսի նյութից, որ հեշտությամբ ջերմությունն ընդունի և հաղորդի ջրին: Այդ տեսակետից նպատակահարմար է պատրաստել պղնձի խողովակներից, սակայն մասսայական օգտագործման համար կարելի է պատրաստել և երկաթե խողովակներից ու թիթեղներից: Կաթսան տեղափոխված է լինում «տաք արկղի» սկզբունքով պատրաստված հառով փայտե արկղում:

2. Արեգակի էներգիայով ջուր տաքացնելու սիստեմի երկ-
գորդ մասը հանդիսանում էն մեկուսիչները: Կաթսայի մեկուսա-
ցումն այնպես պետք է կատարել, որ դեպի Արեգակը դարձած
կողմի մակերեսը մի կողմից լինի Արեգակի ճառագայթների հա-
մար թափանցիկ և մյուս կողմից՝ ներսում կուտակվող ջերմու-
թյան համար անթափանցիկ, որպես մեկուսացման շերտ: Այդպի-
սի մեկուսացման շերտի համար ամենահարմար նյութը հանդի-
սանում է սպիտակ և բարակ տեսակի սովորական ապակին, որով-
հետեւ ապակին այն հատկությունն ունի, որ Արեգակի ուլտրա-
մանուշակագույն 0,37μ ալիքային երկարություն ունեցող ճառա-
գայթներից մինչև ինֆրա-կարմրագույն 2,5μ ալիքային երկա-
րություն ունեցող ճառագայթների համար թափանցիկ է: Իսկ
ներսում ջերմաստիճանը բարձրանալով, կլանող մակերեսութը
նույնպես սկսում է ճառագայթել, բայց տալիս է ավելի մեծ
ալիքային երկարություն ունեցող ճառագայթներ, որոնց համար
ապակին զբիթե անթափանցիկ է: Դրա համար էլ Արեգակի ճա-
ռագայթային էներգիան առաք արկղիս մեջ կուտակվելով, հաս-
նում է բավական բարձր ջերմաստիճանի: Կաթսայի մեկուսացու-
մը հաջող կատարելու դեպքում կարելի է ստանալ մինչև 300°
ջերմություն:

Փորձերը ցույց են տվել, որ Արեգակի ճառագայթները մեկ
շերտանի բարակ ապակիով ներս թափանցելիս՝ ճառագայթային
էներգիան մոտ $15^0/_{\circ}$ -ով նվազում է, որի մեծ մասը տեղի է ու-
նենում անդրադաման, իսկ ավելի փոքր մասը՝ ապակու կլան-
ման շնորհիվ: Արեգակի ճառագայթները ներս թափանցելիս՝
կլանման շնորհիվ ապակին տաքանում է և դրա հետեւանքով տա-
քանում է նաև օդի որոշ շերտ, որը նպաստում է կաթսայի և
ապակու շերտի միջև տեղի ունեցող կոնվեկցիայի նվազմանը:

Այս բոլորից հետո մի կարևոր հարց է ծագում, թե Արեգա-
կի էներգիայից սովորական ապակիների միջոցով, առանց հայե-
մների և ոսպնյակների, հաջող արդյունք ստանալու համար
քանի շերտ ապակի պետք է լինի:

Այդ հարցի վերաբերյալ առաջին անգամ Սոսյուրն իր կա-
տարած փորձերի միջոցով հայտաբերել է, որ ապակու շերտերի
թվի մեծացմանը զուգընթաց, ճառագայթային էներգիայի կո-



բուստը մեծանում է, ևսա Սոսյուրի հաջող արդյունք ստացվում
է 1—3 շերտ ապակեծածկ մակերեսի գեպքում:

Այդ ուղղությամբ հետագայում զգալի աշխատանք է կա-
տարել Աբբոսը, Նրա կատարած փորձերի արդյունքը բերված է
ստորև գետեղված աղյուսակում՝ ճառագայթներն ապակու վրա
ուղղահայաց գիրքով և 45° թեքությամբ ընկնելու գեպքերի հա-
մար: Աբբոսը փորձերի համար օգտագործել է 1,5—2,0 միլիմետր
հաստություն ունեցող ապակի, որն օգտագործում են լուսանկար-
չական թիթեղներ պատրաստելու համար, և 8—10 միլիմետր
հաստություն ունեցող սովորական ապակի: Աբբոսի ուսումնասիր-
բությունները ևս ցույց են տվել որ ձեռնուու է օգտագործել
1—3 շերտ բարակ ապակի: Բայց այդ, նա եկել է այն եղբակա-
ցության, որ ապակու շերտերի թիվը մեծացնելիս էներգիայի
կորուստը մեծանում է, որովհետև ապակու շերտերի թիվը մեծաց-
մանը զուգընթաց փոքրանում է թափանցկությունը: Դա պարզ
երևում է երրորդ աղյուսակում բերված տվյալներից, որոնք
ցույց են տալիս տարբեր թիվով ապակու շերտերի գեպքում թա-
փանցկությունը՝ արտահայտված տոկոսներով:

Աղյուսակ 3.

Ապակու շերտերի թափանցկությունը տոկոսներով

Թեքություն	0°				45°			
	1	2	3	4	1	2	3	4
Ապակու շերտերի թիվը								
Բարակ ապակի	86,5	74,5	63,5	53,3	85,0	71,0	60,0	49,0
Հասա ապակի	79,0	64,0	50,0	39,0	—	—	—	—

Դորձնական կիրառման համար նպատակահարմար է արկղի
ապակեծածկ մակերեսի փեղկերը շատ մեծ չափսի չպատրաստել,
որպեսզի ապակիները շուտ չկոտրվեն: Երկու շերտանի ապակե
մակերեսի համար հարմար է երկու փեղկ պատրաստելու փոխա-
րեն պատրաստել մեկը, բայց այնպես, որ ապակու մի շերտը վե-
րևից գրվի, իսկ մյուսը՝ տակից, իրարից 2—3 սանտիմետր հե-

ռավորությամբ։ Դա ձեռնտու է այս տեսակետից, որ փեղկեր պատրաստելու ծախսը կիսով չափ կկրճատվի և, որ ամենահիմնականն է, ջերմության կորուստը համեմատաբար ավելի քիչ կլինի։

Սիստեմի մասցած մասը՝ պատերը և հատակը՝ պետք է լավ մեկուսացնել ջերմության վատ հաղորդիչ նյութերի շերտով, որպեսզի կուտակվող ջերմության և շրջապատի միջն կոնվեկցիա տեղի չունենաւ։ Մեկուսացնելու համար կարելի է օգտագործել մի շարք նյութեր՝ թաղիք, խցանի և փայտի փոշի, բամբակի մնացողներ, աղբեստ, ավաղ և ջերմության վատ հաղորդիչ այլ նյութեր։ Այս բոլորից հետո պետք է արկդի ներսը սեղացնել կամ երկաթի սե թիթեղ փակցնել։

3. Արեգակնային ստացացման սիստեմի հիմնական մասերից մեկն էլ շարժող մեխանիզմն է (եթե սիստեմը շարժական է), որն արկդի ապակեծածկ մակերեսը շարունակ դարձնում է դեպի Արեգակը։ Իսկ եթե սիստեմն անշարժ է, այն ժամանակ պետք է այնպիսի դիրքով կառուցել որ մի կողմից օրվա ընթացքում ապակեծածկ մակերեսի վրա Արեգակի ճառագայթներն ավելի երկար ժամանակ ընկնեն, իսկ մյուս կողմից՝ որքան հնարավոր է, ուղղված լինի դեպի Արեգակը։ Շարժող մեխանիզմ չունենալու դեպքում նպատակահարմար է, որ ապակեծածկ մակերեսը որոշ թեքությամբ ուղղված լինի դեպի հարավ։ Զնայած անշարժ սիստեմում բարձր ջերմություն չի ստացվում, սակայն մասսայական օգտագործման համար հարմար է այն տեսակետից, որ կարելի է պատրաստել շատ հասարակ կերպով։ Վերջինս շարժական սիստեմից տարրերվում է նրանով, որ ջուրն ավելի ցածր աստիճան է տաքանում։

Հնդհանրապես Արեգակի էներգիայով բարձր աստիճանի ջերմություն և բարձր աստիճանի (80° -ից բարձր) ջուր տաք ստանալու համար կաթսան անպայման շարժող մեխանիզմ պետք է ունենա, որպեսզի կաթսայի ապակեծածկ մակերեսը միշտ ուղղված լինի դեպի Արեգակը, որի շնորհիվ ավելի ուժեղ է տաքանում։ Բացի այդ, բարձր ջերմաստիճանի ջուր ստանալու համար նպատակահարմար է, որ ջրատաքացման սիստեմի յուրաքանչյուր կաթսա պարունակի մոտավորապես մեկ լիտր և ունենայութ 3 քառակուսի մետր տաքացնող մակերես։ Ավելի մեծ քանակությամբ ջուր ստանալու համար պետք է մի շարք կաթսա-

Ներ միացնել իրար և կաղմել մի ամբողջ սիստեմ, այնպես, որ բոլոր կաթուները մի կողմէց միացած լինեն սառը ջրի խողովակի հետ, մյուս կողմէց՝ մի ընդհանուր խողովակի հետ, որով տաք ջուրը հոսում է զեպի ջրամբարը:

Այսպիսով, արեգակնային ջրատաքացման սիստեմը հանդիսանում է ջերմության վատ հաղորդիչներով մեկուսացրած և գեղագիտակն ուղղված կողմը ապակեծածկ շարկղ, որի ներսում տեղավորված է կաթսան: Զուրը կաթսայի ներքեւ մասից ներս է հոսում, իսկ տաքացած ջուրն արտահոսում է վերևի մասից և կուտակվում սիստեմին կից, տերմոսի սկզբունքով պատրաստված ջրամբարում, երկար ժամանակ տաք մնալու համար: Կուտակված տաք ջուրը կարելի է օգտագործել զանազան նպատակների համար, ինչպես, օրինակ, բաղնիքների, լվացքատների, պահածոների, տեքստիլ արդյունաբերության և այլ բնագավառներում: Ջրամբար պատրաստելը նպատակահարմար է այն տեսակետից, որ ցերեկը տաքացրած ջուրը կարելի է օգտագործել նաև գիշերը և կարճ ժամանակ ամպամած լինելու դեպքերում, իսկ երկար ժամանակ ամպամած լինելու դեպքում միշտ տաք ջուր ունենալու համար կարելի է ջրատաքացման սիստեմում պատրաստել էլեկտրական էներգիայի միջոցով ջուր տաքացնելու լրացուցիչ հարմարանք:

Երեգակի էներգիան տարբեր նպատակներով ջուր տաքացնելու և եռացնելու համար օգտագործվում է Միջին Ասիայի Սովորական Սոցիալիստական Ռեպուբլիկաներում՝ Ուզբեկստանի, Տաջիկստանի և Ղազախստանի մի շարք շրջաններում:

Արեգակնային էներգիայի օգտագործման բնագավառում արժեքավոր հետազոտություն և գործնական նշանակություն ունեցող ուսումնասիրություն է կատարել Կ. Գ. Տրոֆիմովը: Նրան հաջողվել է պատրաստել այնպիսի փոքր ջերմահաղորդականություն ունեցող պատերով՝ «տաք արկղ», որ բավական բարձր աստիճանի ջերմություն է ստացվել Միջին Ասիայի պայմաններում, Կ. Գ. Տրոֆիմովը իր կատարած փորձերի ընթացքում (1935 թ.) ջերմությունը հասցել է 226° , երբ արշապատի օդի ջերմությունը եղել է 20° :

Ստորև բերված աղյուսակում զետեղված են Կ. Գ. Տրոֆի-

Մեկ քառ. մետր ապակեծածկ մակերես ունեցող շարժական ջրատաքացման կաթսայի ստացած օգտակար ջերմության քանակը՝ մեծ կալորիաներով ըստ ամիսների

	1 ա պ ա կ ե լ					2 ա պ ա կ ե լ					3 ա պ ա կ ե	
	60°	70°	80°	90°	98— 100°	70°	80°	90°	98— 100°	98— 100°	98— 100°	
I	34,388	19,201	18,125	5,628	1,260	19,586	14,749	8,932	3,766	4,592		
II	30,961	26,425	17,822	9,723	5,530	24,514	19,327	18,321	7,433	8,106		
III	52,700	45,900	37,000	25,700	19,660	43,530	36,730	28,730	21,290	20,880		
IV	86,618	76,776	64,344	48,790	38,976	72,380	62,608	50,806	39,648	37,632		
V	141,603	127,974	110,523	87,423	70,728	—	105,546	88,011	71,232	67,641		
VI	191,325	177,600	157,875	131,050	111,450	—	148,100	127,725	107,900	101,900		
VII	219,066	204,044	182,120	153,294	132,762	—	—	148,074	128,586	118,900		
VIII	203,756	188,916	167,748	139,216	118,584	—	153,888	136,528	116,900	107,632		
IX	162,916	147,342	127,400	191,010	81,900	—	109,148	191,556	82,368	78,416		
X	111,048	98,238	81,795	60,963	46,893	92,505	68,566	93,945	49,350	46,578		
XI	55,809	47,151	86,322	28,140	14,625	45,708	29,068	29,391	17,901	18,018		
XII	24,388		18,125	5,628	1,260	19,586	14,749	8,932	3,766	4,592		
Դռւ- մա- րդ	1,304,578	1,178,768	1,009,199	791,565	642,828	—	—	803,951	650,141	614,887		

մովի կատարած փորձերից ստացված տվյալները, որոնք ցույց են տալիս, թե ըստ ամիսների ջուրը տարբեր աստիճան տաքացնելու գեղքում արեգակնային ջրատաքարանում ինչպիսի քանակությամբ ջերմություն է եղել, արտահայտված մեծ կալորիաներով:

Աղյուսակի տվյալներից պարզ երևում է, որ շարժական ջրատաքացնան կաթսայի դեպի Արեգակն ուղղված մասի մակերևույթը մեկ շերտ ապակիով ծածկված լինելով՝ գարնանը և աշնանը, երկու շերտ ապակիով ծածկված լինելով՝ ձմեռը: Բացի այդ՝ երեք գում է, որ ջուրը ցածր աստիճան տաքացնելու դեղքում ավելի մեծ քանակությամբ օգտակար ջերմություն է ստացվում, քան բարձր աստիճան տաքացնելու ժամանակ, նա բացատրվում է նրանով, որ ջուրը բարձր աստիճան տաքացնելու ժամանակ կորուստն ավելի մեծ է լինում:


Կ. Գ. Տրոֆիմովի շարժական արեգակնային ջրատաքացնան կաթսան մետաղե մի հարթ տուփ է, 6—8 միլիմետր հաստությամբ, տեղավորված 10—12 սանտիմետր բարձրություն ունեցող պրկուռմ: Կաթսան ջերմության վատ հաղորդիչ նյութերով մեկուսացնելու համար փորձերի ժամանակ օգտագործվել է ըուրդ, բամբակ, հարդ և այլն, սակայն պարզվել է, որ այդ նպատակի համար արկղի հատակի ամենահաջող մեկուսացման շերտ կարելի է պատրաստել սպիտակ թիթեղից: Դրա համար արկղի հատակին իրարից 20 սանտիմետր հեռավորությամբ պետք է դասավորել շատ բարակ փայտե ձողեր և դրանց վրա գնել սպիտակ թիթեղ, թիթեղի վրա նորից ձողեր այնպիսի զասավորությամբ, որ առաջինների նկատմամբ լինեն ուղղահայաց, վերջինների վրա՝ թիթեղ և նույն կարգով կրկնել 3—5 անգամ: Թիթեղներն իրարից բաժանված պիտի լինեն 1 սանտիմետր օդի շերտով:

Նույն եղանակով մեկուսացման շերտ կարելի է պատրաստել նաև ֆաներայից ու ստվարաթղթեց: Վերջին ձողերի վրա պետք է տեղավորել կաթսան՝ ներկված ոչ փայլուն սև գույնով, և ամրացնել որից հետո կաթսան վերևից ծածկել մեկ կամ մի քանի շերտ լավ տեսակի բարակ և թափանցիկ ապակիով:

Տարվա տարբեր ժամանակներում կարելի է ապակու շերտերի թիվը փոփոխել: Օրինակ, ինչպես ստացինք, Միջին Ասիա-

յուր ամառը ջուրը եռացնելու համար բավական է մեկ շերտ ապակի, աշնանը և գարնանը՝ երկու շերտ, իսկ ձմեռը՝ երեք շերտ:

Ցանկացած ժամանակ կաթսան դեպի Արեգակը դարձնելու համար (օրվա ընթացքում առնվազն 5—6 անգամ) Կ. Գ. Տրոֆիմովը կաթսան միացրել է մի առանձին սյան, որպեսզի հսարավոր լինի շարժել և ապակեծածկ մասն ուղղել դեպի Արեգակը: Սյան վրա տեղավորել է սառը ջրի ամբար, որտեղից առանձին խողովակով ջուրը հոսել է կաթսայի մեջ և վերևից արտահոսել է տաք կամ հոացող ջուրը (տես նկ. 2):



Նկ. 2. Արեգակի էներգիայով ջուր տաքացնելու Տրոֆիմովի շարժական կաթսան:

Այժմ հետաքրքրական է իմանալ թե կաթսայում ջուրը եռալու տևողությունն ի՞նչ գործոններից է կախված:

Բնական է, որ ամենից առաջ կախված է տարվա եղանակ:


կից, օրվա ժամանակից, փորձի տեղից և ապա կաթսայում եղած ջրի շերտի հաստությունից, Օրինակ՝ Տաշքենդի պայմաններում Տրոֆիմովի փորձերի ժամանակ, ամառը 10 միլիմետր հաստության ջրի շերտ պարունակող կաթսայում ջուրը եռացել է 1,5 ժամվա ընթացքում, Այսպիսով, ջուր եռացնելու վերաբերյալ կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ջրի շերտի հաստությունը պետք է լինի 12 միլիմետրից ոչ ավելի և 5 միլիմետրից ոչ պակաս, նայելով թե փորձը որտեղ է կատարվում, որ եղանակին, օրվա որ ժամին և ինչպիսի եղանակ է՝ լրիվ պմրզ, թե կիսամպամած։ Հետևաբար, ջրի շերտի հաստությունը կարելի է փոփոխել վերոնիշյալ սահմաններում, որովհետև դրանից ավելի փոքրացնելու դեպքում կաթսան կարող է լիսավել իսկ ջուրը ցածր աստիճան տաքացնելու համար կարելի է ջրի շերտի հաստությունը հասցնել մինչև 25 միլիմետրի։

Ընդհանրապես ջուրը մինչև 70° տաքացնելու համար, ինչպես ասացինք, նպատակահարժար է գործածել անշարժ կաթսա, որի պատրաստեն ավելի հեշտ է և, բացի այդ, մոտ երեք անգամ ավելի պակաս ծախք է պահանջվում շարժականի համեմատությամբ։ Քանի որ ջուրը 70°-ից ավելի չի տաքանում, ապա կաթսայի տակի կողմը (արկդի հատակը) մի քանի շերտ ֆաներայով կամ թիթեղով մեկուսացնելու փոխարեն կարելի է բավականական երկու շերտ ֆաներայով, իսկ կաթսայի վերև ծածկել մեկ շերտ ապակիով։

Այդ ուղղությամբ Միջին Ասիայում կատարած փորձերը ցույց են տվել, որ տարվա ընթացքում մեկ քառակուսի մետր արեգակնային շարժական ջրատաքացման կաթսայում մինչև 70° այնքան ջուր կարելի է տաքացնել, որքան 580 կիլոգրամ քարածուխ վառելու դեպքում, իսկ անշարժի գեպքում՝ 240 կիլոգրամ քարածուխ։

Անշարժ ջրատաքացման կաթսան շատ նպատակահարմար է պատրաստել շենքերի տանիքների վրա, որոշ թեքությամբ դարձած դեպի հարավ՝ Դա հարմար է այն տեսակետից, որ նախառանձին տեղ չի զբաղեցնում և հարկ չի լինում պատրաստել առանձին պատվանդան՝ կաթսաները տեղափորելու համար, թացի այդ՝ աաքացած ջուրը տանիքից բնակարաններին մատակարաբելը տեխնիկապես ավելի հարմար է,

Բացի այդ, Ուզբեկական ՍՍՌ-ի մի շարք սովորողներում՝ կոլխոզներում, սանատորիաներում և բնակելի շենքերին կից կառուցված են արեգակնային ջրատաքացման սիստեմներ։ Օրինակ՝ «Զանդելի» սովորողի արեգակնային բաղնիքը, որը ունի 40 քառակուսի մետր տաքացնող մակերես (ապակեծածկ), օլիվա ընթացքում տալիս է 4.000 լիտր տաք ջուր։ Բացի այդ, Ուզբեկական ՍՍՌ-ի տարբեր վայրերում Բ. Վեյնբերգի և Վ. Վեյնբերգի կատարած Նկ. № 3. Արեգակի էներգիայով ջուր տաքացնելու կաթսաւ փորձերի համաձայն, գոր-




Նկ. 4. Արեգակի էներգիայով տանիքի վրա ջուր տաքացնելու սիստեմ։

Յում են մինչև 20 արեգակնային էներգիայով ջրաեռացման ապարատներ։¹

Միջին Ասիայում մի շարք բնակելի շենքերի տանիքների վրա պատրաստված են ջրատաքացման սիստեմներ, որոնք ջրատար խողովակներով միացած են բնակարանների վաննաների հետ՝ ցանկացած ժամանակ պատրաստի տաք ջուր օպտագործելու համար։

Ուզբեկական ՍՍՌ-ի Պետականի բնակելի շենքի տանիքի վրա պատրաստած արեգակնային ջրատաքացման սիստեմը տաք ջուր է մատակարարում 8 բնակարանի։ Բնակելի շենքերի տանիքների վրա պատրաստած ջրատաքացման սիստեմների միջոցով բնակարաններին տաք ջուր մատակարարելու սովորությունն ալելի տարածված է Կալբֆորնիայում։



Նկ. 5. Արեգակնային ջրատաքացման սիստեմ, որ տաք ջուր է մատակարարում Զանգելի՛ սովորողի բաղնիքին։

Բնակելի շենքեր՝ տաքացնելու համար արեգակնային էներգիան օգտագործելու ուղղությամբ մշակված են որոշ նախագծեր, որոնք, սակայն, դեռևս չեն կիրառվում։

¹ Բիրված տվյալները վերաբերում են մինչև 1935 թ. ժամանակաշրջանին։

Արագիստի լրիվ պատկերացում ունենանք, թե վերջին տարիներում ինչպիսի ծավալ է ստացել արեգակնային էներգիայի օգտագործումը, բավական է հիշատակել, որ 1936 թվականին միայն Ուզբեկան ՍՍՌ-ում արեգակնային ջրատաքացման սիստեմների տաքացնող մակերեսը եղել է մոտավորապես 3.000 քառակուսի մետր: Արեգակի ճառագայթային էներգիայով ջուր տաքացնելու և եռացնելու վերաբերյալ 1941—42 թվականներին փորձեր ենք կատարել նաև Երևանի Աստղադիտարանում: Կաթսան եղել է խողովակածե, պատրաստված 10 միլիմետր տրամագիծ ունեցող պղնձե և երկաթե խողովակներից, տեղավորված ջերմության վատ հաղորդիչ նյութերի շերտով մեկուսացված փայտե արկղում; իսկ վերեկի մասը՝ ծածկված երկու շերտ սովորական սպիտակ ալպակիով: Արկղի ներսը եղել է սևացրած և հատակին դրված սև թիթեղ: Կաթսան հարմարեցված է եղել առանձին շարժական պատվանդանի վրա, ցանկացած ժամանակ Արեգակի ճառագայթների նկատմամբ ուղղահայաց դիրք տալու համար:

Կարելի է ասել, որ ինչպես Երևանում, այնպես էլ Հայատանի մի շարք շրջաններում Արեգակի էներգիան մոտավորապես 5—6 ամիս կարելի է օգտագործել քաղաքների բնակելի շենքերում, կոլխոզներում, սովխոզներում, գործարաններում, սանատորիաներում ջուր տաքացնելու, եռացնելու կենցաղային և այլ նպատակներով: Կարելի է պատրաստել արեգակնային բաղնիքներ, ավելի մեծ թվով արեգակնային դուշեր, լվացքատներ և այլն վերջապես, արժեք հիշատակել նաև այն, որ վերջին տարիներս Կ. Գ. Տրոֆիմովի մշակած եղանակով արեգակնային էներգիայի օգտագործումը մեծ նշանակություն ունի, գործնական է և ձեռնոտու է սանատորիաների, բաղնիքների, լվացքատների, բուժման վաննաների, ինչպես ցեխի վաննաներ տաքացնելու, այնպես էլ ջուր թորելու և այլ տեխնիկական ու կենցաղային նպատակների ու պահանջների սպասարկման համար: Բացի այդ՝ Արեգակի ռադիացիան օգտագործում են զանազան տեսակի հիվանդություններ բուժելու համար: Որոշ սանատորիաներում, ինչպես, օրինակ, Թեոդոսիայում, փորձեր են արվել հիվանդի ամբողջ մարմինը կամ մարմնի առանձին մասերը տաքացնել հատուկ կերպով պատրաստված պատակե ծածկոցներով:

Արեգակնային էներգիայի օգտագործումը, որպես բուժման գործոն, խոշոր նշանակություն ունի, և թեպեա առաջժմ գտնվում է զարգացման սաղմային վիճակում, բայց զարգանալու մեծ հեռանկարներ ունի: Վերջերս այդ ուղղությամբ մեր Միության մեջ գիտահետազոտական բնույթի լայն ուսումնասիրություններ են կատարվում, հատկապես Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանում վիրավորված մարտիկներին բուժելու համար:


Արեգակնային ջրանոց

Դեռ վաղ ժամանակներից սկսած մեր նախնիները զանազան տեսակի մրգեր, բանջարեղիններ, հացահատիկներ, մորթիներ և այլն սովորական եղանակով չորացրել են արևի տակ, ինչպես ներկայում:

Սակայն հելլուսինիկայի զարգացումը հնարավորություն է տվել Արեգակի էներգիան ավելի կատարելագործված եղանակով օգտագործել հատկապես մրգեր չորացնելու բնագավառում, որի համար մի շարք վայրերում կառուցված են արեգակնային չորանոցներ: Չնայած որ այդ ուղղությամբ գեռս քիչ աշխատանք է կատարված, բայց մասնագետների մեջ բավական մեծ հետաքրքրություն է առաջացել զբաղվելու այդ հարցով, որը խոշոր տնտեսական նշանակություն ունի: Մրգեր չորացնելու համար արեգակնային էներգիան օգտագործելու վերաբերյալ Կ. Գ. Տրոֆիմովի կատարած փորձերը տվել են հաջող արդյունք, որը ներկայումս գործնական լայն կիրառություն ունի Միջին Ասիայի Սովորական Սոցիալիստական Ռեսովուլյուսների մի շարք շրջանների սովորողներում, կոլխոզներում: Արեգակի էներգիայով զանազան տեսակի մրգեր չորացնելու չորանոցը բավական հասարակ կառուցվածք ունի: Դրա համար պետք է պատրաստել փայտե արկղներ, ջերմության վատ հաղորդիչ նյութերով որոշ չափով մեկուսացված, իսկ վերևի կողմը, որտեղից պետք է ճառագայթները ներս թափանցեն, պետք է ծածկել մի շերտ սովորական ապակիով, այնպես, որ ունենա օդանցքներ՝ ներսում կուտակվող գոլորշու դուրս գալու համար: Դա պետք է այնպիս պատրաստել, որ արկղների ներքեւ մասից գրսի օգը ներս մտնի և վերևի կողմից գոլորշին դուրս գա:

Սովորաբար

ուժեղ գոլորշիացումը տեղի է ունենում թարմ միրզը արկղների մեջ տեղափորելուց անմիջապես հետո, առաջին 3—4 ժամվա ընթացքում, որից հետո զրեթե աննկատելի է դառնում: Պետք է արկղներն այնպիսի խորությամբ պատրաստել, որ մրգերն ազատ կերպով տեղափորվեն ներսում: Արկղների հատակը կարելի է պատրաստել իրարից շատ փոքր հեռավորությամբ երկու շերտ ֆաներայից, որը հանդիսանում է մեկուսացման շերտ: մեկուսացման համար կարելի է օգտագործել նաև այլ նյութեր:



Նկ. 6. Ուղեկական ՍՍՌ Գետպանի շենքի կտրան արեգակնային ջրատաքացման սիստեմը, որ տաք ջուր է տալիս բնակարաններին.

Այնուհետև արկղների հատակին պետք է դնել մետաղե թիթեղ՝ ներկված ու գույնով, որպեսզի ապակիով ներս թափանցող ճառագայթները կլանվեն, այսինքն պատրաստել «տաք արկղի» սկզբունքով, բայց ոչ այնպես խիստ մեկուսացված, ինչպես արզում է ջուր տաքացնելու կամ եռացնելու դեպքերում, որովհետև մրգեր չորացնելու համար պահանջվում է ցածր ջերմություն՝ մինչև 80°:

Թիթեղը ներկելու մյուս առավելությունն էլ այն է, որ օքսիդացում տեղի չի ունենում, որովհետև մրգերը դրվում են այդ թիթեղի վրա: Թիթեղի փոխարեն կարելի է օգտագործել

Նաև փայտե ցանց և մըգերը դասավորել այդ ցանցի վրա, բայց արկղի հատակն այդ գեպքում նույնպես պետք է սև գունով ներկել: Արկղները կարող են լինել տարրեր մեծության, օրինակ՝ երեք մետր երկարության, մեկ մետր լայնության և այլն:

Արկղները որոշ թեքությամբ դասավորելու համար նպատակ հանարժար է փայտե սյուներից կամ աղյուսից պատրաստել պատվանդան՝ արկղների ծայրերը հենելու և ամրացնելու համար: Նպատակահարմար է, որ արկղների թեքությունը հորիզոնական հարթության հետ կազմի $20-30^{\circ}$ անկյուն այնպիսի դիրքով, որ բարձր կողմն ուղղված լինի գեղվի հյուսիս, իսկ ցածրը՝ հարավ, այսինքն ապակեծածկ կողմը ուղղված լինի գեղվի հարավ:

Արկղների թեքությունը մեծացնելին օգափոխությունն ավելի հաջող է կատարվում, բայց մյուս կողմից էլ ավելի փոքր քանակությամբ ճառագայթներ են ապակեկով ներս թափանցում, և ընդհակառակ:

Մըգեր չորացնելու արեգակնային չորանոցի առավելությունը պարզ երևում է ստորև բերված աղյուսակի տվյալներից, բանի որ իբրև մեծ տարրերություն կա սովորական եղանակով, այսինքն բաց օգում չորացնելու և արեգակնային չորանոցում չորացնելու ժամանակների միջև:

Ա դ յ ա ռ ւ ա կ 5

Մ ը գ ե ր	Չորացնան տեղողությունը (օրերով)	
	Արեգակնային չորանոցում	Սովորական եղանակով
Խ ա ղ ո ղ	2 — 3	8 — 10
Ս ա լ ո ր	3	8 — 10
Խ ն ձ ո ր	1	2 — 3

Այդ ուղղությամբ կատարված փորձերի ուսումնասիրությունը ցույց է տվել որ արեգակնային չորացներում մըգեր չորացնելը, սովորական եղանակով չորացնելու համեմատությամբ,

ունի մի շարք առավելություններ: Արեգակնային չորանոցում առացվում են ամենաբարձր որակի համեղ և մաքուր չորացած մրգեր, որովհետև չորացման պրոցեսում մրգերը պաշտպանված են լինում փոշուց, անձրեներից և, որ զլիավորն է, միջատներից, որոնք բավական վասա են պատճառում և իջեցնում մրգի որակը: Երկրորդ, արեգակնային չորանոցում մրգերը մոտավորապես 3—4 անգամ ավելի արագ են չորանում, քան սովորական եղանակով, և ընդհանրապես կրծատվում են չորացման պրոցեսում կատարվող տեխնիկական բնույթի մի շարք աշխատանքներ:

Իսկ եթե արեգակնային չորանոցը համեմատելու լինենք էլեկտրական էներգիայով կամ վառելանյութերով գործող չորանոցի հետ, որտեղ մրգերի չորացումը կատարվում է հատուկ կերպով պատրաստված վառարաններում, կտեսնենք, որ արեգակնային չորանոցը դրա նկատմամբ ունի և՛ դրական, և՛ բացասական կողմեր:

Արեգակնային չորանոցի դրական կողմն այն է, որ, ինչպես ասացինք, շատ հասարակ կառուցվածք ունի, ամենահիմնականը՝ առանց որևէ վառելանյութ կամ էլեկտրական էներգիա օգտագործելու ստացվում է չորացման համար անհրաժեշտ ջերմություն: Բացասական կողմն այն է, որ օգտագործելի է միայն ցերեկը՝ արև ժամանակ: Իսկ վառարաններում չորացնելու առավելությունն այն է, որ օգտագործելի է ամբողջ օրը և չորացման պրոցեսն ավելի արագ է կատարվում, բայց մյուս կողմից էլ դրա համար ծախսվում է զգալի քանակությամբ վառելանյութ կամ էլեկտրական էներգիա: Հետևապես, մասսայական օգտագործման համար վերջինս պատրաստելը և օգտագործելն անհամեմատ ավելի մեծ ծախսերի ու դժվարությունների հետ է կապված:


Ինչպես տեսնում ենք, մրգելենի սեղոնում արեգակնային էներգիայի օգտագործումը չորանոցների համար շատ ձեռնուու է և գործնական խոշոր նշանակություն ունի մասսայական օգտագործման համար, այնպես որ այգեգործական շրջանների կուխողները և սովորողները կարող են պատրաստել այդպիսի հարմարանք բարձր որակի գեղձ, ծիրան, խաղող, խնձոր, սալոր, տանձ և այլ տեսակի մրգեր չորացնելու համար:

Արեգակնային չորանոցի վերաբերյալ կատարված փորձերը ցույց են տվել, որ երեք ամսվա ընթացքում մեկ քառակուսի

մետր մակերես ունեցող արեգակնային չորանոցում կարելի է չորացնել միջին հաշվով, 600 կիլոգրամ թարմ միրգ, որից ստացվում է 120 կիլոգրամ չորացած միրգ: Հինգ կիլոգրամ թարմ մրգից, միջին թվով, ստացվում է մոտավորապես մեկ կիլոգրամ չորացած միրգ: Դա կախված է մրգի տեսակներից:

Անհրաժեշտ է հիշատակել, որ արեգակնային չորանոցների կիրառությունն առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես այն այգեգործական երկրների համար, որոնք հարուստ են չորացած ենթակա զանազան տեսակի մրգերով, բանջարեղեններով և արեգակի ճառագայթային էներգիայով, բայց աղքատ են վառելանյութով և էներգիայի այլ ուսուրամներով:

Միգերի տակի թիթեղ



Նկ. 7. Արեգակնային չորանոց:

Այդ տեսակետից մեր Միության մեջ Արեգակի էներգիան ինչպես այլ նպատակների, այնպես էլ մրգեր չորացնելու համար ամենից առաջ հարմար է օգտագործել Միջին Ասիայի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների այգեգործական վըշաններում, որտեղ և ներկայում օգտագործվում է:

Արեգակի էներգիան, մրգեր չորացնելու համար, աղատ կերպով կարելի է օգտագործել նաև Սովետական Միության մյուս հարավային և հարավ-արևմտյան այգեգործական ու բանջարաբուծական շրջաններում, օրինակ՝ Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասի որոշ շրջաններում, Ղրիմում և այլ վայրերում:

Ներկայում Սամարգանգում և Միջին Ասիայի այլ վայրերում մեծ քանակությամբ մրգեր չորացնելու համար հելիոտեխնիկայի հիմունքներով կառուցված են արեգակնային չորանոց-

ներ: Սամարդանդի արեգակնային չորանոցները կառուցված են ջերմոցների տիպի. սրանց տաքացնող ապակեծածկ մակերևույթն ունի երկու կողմի վրա թեքություն՝ արևելյան և արևմտյան, որոնք հորիզոնական հարթության հետ կազմում են մոտավորապես 40° թեքություն:

Մի քանի խոսք էլ մեր կատարած փորձերի մասին:

1941—42 թվականներին ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի հայկական ֆիլիալի երևանի Աստղադիտարանում, բացի ջուր տաքացնելուց, միաժամանակ փորձեր ենք կատարել նաև մրգեր չորացնելու վերաբերյալ Արեգակնային չորանոցի եղանակով զանազան տեսակի մրգեր չորացնելու համար պատրաստել ենք 12 տմ բարձրություն, 2 մ երկարություն և 80 սմ լայնություն ունեցող փայտե հասարակ արկղ, հատակը և կողերը որոշ չափով ջերմության վատ հաղորդիչ նյութերով մեկուսացրած, այս հաշվով, որ ներսում ջերմությունը լինի 50—80°-ի սահմաններում: Արկղի ներսում դրել ենք ոչ փայլուն սև գույնով ներկած թիթեղ և դրա վրա դարսել մրգերը:

Ծիրանի մի քանի տեսակների, սալորի, բալի վերաբերյալ փորձերը կատարել ենք 1943 թվականի հուլիս ամսին, իսկ խաղողի վերաբերյալ՝ 1942 թվականի սեպտեմբերի վերջերին: Ծիրանը թարմ ժամանակ, ծծմբի ծուխ տալու շնորհիվ, պահպանում է իր բնական գույնը: Իսկ խաղողը նպատակահարմար է թարմ վիճակում սուզել մոտավորապես եռման աստիճանի տաք ջրի մեջ, որից հետո փուել չորանոցի մեջ: Դա այն նշանակությունն ունի, որ նախ արագացնում է չորացման պրոցեսը և, ապա, որ կարեղն է և ամենահիմնականը, մաքրվում է փոշիներից: Կատարած փորձերի արդյունքը բերված է ստորև գետեղված աղյուսակում: Փորձերի արդյունքը ցույց է տվել, որ մեր պայմաններում արեգակնային չորանոցում անհամեմատ շատ կարճ ժամանակամիջոցում բարձր որակի չորացած մրգեր են ստացվում:

Վերոհիշյալ արդյունքներն ստացվել են այն ժամանակ, երբ 1 քտորակուսի մետր մակերես ունեցող արկղում տեղավորված է եղել 7—10 կիլոգրամ միրգ այնպես, որ 100 քառակուսի մետր մակերես ունեցող արեգակնային չորանոցում միանգամից կարելի է տեղավորել մոտավորապես մեկ տոննա միրգ:

Քանի որ մրգերը, նախքան չորանոցի մեջ տեղավորելը, անհրաժեշտ է ենթարկել նախնական մշակման, չորացման ընթացքն արագացնելու և մաքրելու նպատակով, որի համար պետք է ունենալ տաք ջուր, հետևապես շատ ձեռնտու է արեգակնային չորանոցում պատրաստել ջուր տաքացնելու և եռացնելու կաթսա, օրվա ցանկացած ժամանակ պատրաստի տաք ջուր օգտագործելու համար:

Աղյուսակ 6


Մ բ գ ե ր	Զորացման ժամանակը բաց օդում	Զորացման ժամանակը արեգակնա- յին չորա- նոցում	Քաշը (կիլոգր.)		Մանո- թու- թյուն
			Թարմ ժամանակ	Զորացման ժամանակ	
Խ ա ղ ո ւ ն	10 — 20 օր	2 — 3	4,5	1	
Երբան շալախ	6 — 8 օր	1 — 2	6	1	առանց կորիզի
Երբան խարջի	7 — 10 օր	2 —	4	1	
Ս ա լ ո ւ ր	6 — 8 օր	1 — 2	5	1	
Բ ա լ	6 օր	1 — 2	4	1	

Նկատի ունենալով, որ արեգակնային չորանոցում մրգեր և բանջարեղեններ չորացնելն ունի մի շաբթ կարևոր առավելություններ, որոնց մասին վերևում խոսեցինք, ցանկալի է, որ Հայաստանի այգեգործական շրջանների սովորությունները, կոլխոզները զանազան տեսակի որակյալ չորացած մրգեր ստանալու համար պատրաստեն արեգակնային չորանոցների Դառանձնապես ձեռնտու է այն շրջանների համար, որոնք մեծ քանակությամբ խաղող, ծիրան, դեղձ և այլ մրգեր ու բանջարեղեններ են չորացնում:

Արեգակնային աղջուս — բորակ

Արեգակնային էներգիայով ջուր թորելու հարցը խոշոր նշանակություն ունի այն վայրերի համար, որտեղ եղած ջրերը մեծ մասամբ աղի կամ դառնա-աղի են, իսկ մաքուր ջուր հազվագյուտ է լինում: Այդ տեսակետից Արեգակի ճառագայթային էներգիայի

օգտագործումը նշանակալից է Աֆրիկայի, Հարավային Ամերիկայի, Միջին Ասիայի որոշ շրջաններում և այլ վայրերում մաքուր ջուր և աղ ստանալու համար։ Ներկայումս չափազանց ակտուալ նշանակություն ունի արեգակնային ջրաղատիչների զարդացումը՝ մեծ տարածությամբ ամայի վայրեր կենդանացնելու և օգտագործելու համար։



Նկ. 8. Արեգակնային չորանոց։

Պետք է նկատել, որ չնայած Արեգակի էներգիայով ջուր թորելլ որոշ երկրների համար կենսական նշանակություն ունի, բայց մինչև 19-րդ դարի վերջերն այդ հարցով ոչ ոք չի զբաղվել։ Այդ հարցով զբաղվել են միայն Սոսյայուրի այն փորձերից հետո, որ կատարել է «տաք արկղի» միջոցով Արեգակի էներգիան օգտագործելու վերաբերյալ։ Այդ ուղղությամբ ամենից առաջ զբաղվել են Հարավային Ամերիկայում՝ Սալինասում (Չիլիում), որտեղ 1873 թվականին կառուցվել է մոտ 5.000 քառակուսի մետր ապակե ճակերես ունեցող արեգակնային աղջատիչ, որի մեջ լցրած աղի ջուրը, բարձր ջերմաստիճանի շնորհիվ, գուլորշիացել ու խտացել է ապակու ներսի մակերեսի վրա և այդտեղից լցվելով առանձին կերպով պատրաստված խողովակի մեջ,

սրպես մաքուր ջուր հոսել լցվել է հատուկ անոթի մեջ։ Այդ աղ-
զատիչը օրվա մեջ տվել է 225 լիտր մաքուր ջուր։ Մակայն, հա-
մաձայն մեղ հասած տեղեկությունների, հետազայռմ այդ ուղ-
ղությամբ Արեգակի էներգիայի օգտագործումը այդպես չի տա-
րածվել, չնորհիվ այն հանգամանքի, որ Սալինասում ժամանակ
առ ժամանակ ուժեղ կարկուտ տեղալու պատճառով ապակիները
ջարդվել են։

Այդ հարցով զբաղվել են նաև ֆրանսիացիներն իրենց ափրի-
կական գաղութներում՝ Արքիրում, Թունիսում և այլ տեղեր՝ Արե-
գակի էներգիայի միջոցով բանակին թորած ջուր մատակարարե-
լու համար։ 1925 թվականին Թունիսում ֆրանսիացիները արե-
գակնային աղղատիչներ պատրաստելու համար կոնկուրս են հայ-
տարարել։ Թունիսի օգերեսութաբանական ծառայության աշխա-
տակից Ժենեստուսին հաջողվել է մշակել և պատրաստել արե-
գակնային էներգիայով աշխատող աղղատիչ սարք։ Հետագայում
Արքիրում, Թունիսում լայն ծավալ է ստացել արեգակնային
աղղատիչների կիրառությունը և սկսել են օգտագործել նաև տե-
ղական բնակիչները։

Արեգակնային աղղատիչների օգտագործման հարցը խոշոր
նշանակություն ունի մեր Միության որոշ վայրերի, ինչպես,
օրինակ, Թուրքմենական ՍՍՌ-ի, Ուզբեկական ՍՍՌ-ի, Արե-
մայան Ղաղախստանի հարավ-արևմտյան մասերի և այլ վայրե-
րի համար։

Այդ ուղղությամբ վերջին տասնամյակի ընթացքում ար-
ժեքավոր աշխատանք է կատարել Կ. Գ. Տրոֆիմովը։ Նրա կատա-
րած փորձերի դրական արդյունքը ներկայումս կիրառվում է Մի-
ջին Ասիայի մի շարք վայրերում։ Ամենից առաջ նպատակահար-
մար է արեգակնային աղղատիչներ կառուցել կասպից, Արալյան
ծովերի և Բալկան լճի համապատասխան ափերին։ այդ աղղա-
տիչները հնարավորություն կտան որոշ չափով լուծելու ջրի
պլորեմը։ Այդ եղանակով ստացած աղը և թորած ջուրը կարե-
մի է օգտագործել Քիմիական արդյունաբերության մեջ և այլ
պանազան նպատակների համար։

Նման վայրերում ամառ ժամանակ ջրի և քամու միջոցով
ստացած էներգիան զգալի չափով նվազում է, բայց դրա փոխա-
րեն Արեգակի ճառագայթային էներգիան մաքսիմում հղորու-

թյան է հասնում, այնպես որ տարվա որոշ սեզոնում, բացի «սպիտակ» և «կաղույտ» ածուխների էներգիայից, որը բավականաշափ նվազում է, կարելի է, որպես էներգիայի աղբյուր, օգտագործել «դեղին ածուխը»—Արեգակի ճառագայթային էներգիան:

Կ. Գ. Տրոֆիմովի մշակած արեգակնային էներգիայով ջուր թորելու սիստեմը երկու տիպի՝ է՛ շարժական և անշարժ, որոնք կարող են լինել հասարակ և ոեգեներատիվ: Հետազոտությունը ցույց է տվել որ ինչպես մյուս դեպքերում, այնպես էլ այս գեպքում, ավելի մեծ արդյունք է ստացվում այն ժամանակ, երբ սիստեմի՝ Արեգակի ճառագայթային էներգիան ընդունող մասը միշտ ուղղահայաց է լինում Արեգակից եկող ճառագայթներին, այսինքն Արեգակի շարժման ընթացքի համապատասխան շարժող մեխանիզմ է ունենում:


Կ. Գ. Տրոֆիմովի կատարած փորձերը ցույց են տվել, որ մեկ քառակուսի մետր մակերես ունեցող հասարակ անշարժ արեգակնային աղղատը մեկ օրվա ընթացքում կարող է տալ 5—6 լիտր թորած ջուր, շարժականը՝ 8—9 լիտր, իսկ ոեգեներատիվ կերպով պատրաստած անշարժը՝ 10—12 լիտր, շարժականը՝ 16—18 լիտր: Միջին Ասիայի պայմաններում մեկ քառակուսի մետր մակերես ունեցող արեգակնային շարժական աղղատիչից տարվա ընթացքում կարելի է ստանալ 1,000 լիտր թորած ջուր, իսկ անշարժից՝ 700 լիտր:

Արեգակնային էներգիայով աղղատներ պատրաստելու գործով դով դրաղվել է նաև Պ. Վ. Վեյնբերգը:

Արեգակնային խոհանոց

Որոշ երկրներում, ինչպես Հնդկաստանում, Աֆրիկայում, Ամերիկայում, Միջին Ասիայում, փորձեր են կատարվել և կատարվում են՝ կառուցելու արեգակնային խոհանոց, այսպես կոչված «անկրակ խոհանոց», որտեղ կարելի է պատրաստել զանազան տեսակի ճաշեր և խմորեղիններ: Թանի որ արեգակնային խոհանոցների համար ավելի բարձր ջերմություն է պետք, որա համար էլ սովորական ապակիների փոխարեն օգտագործում են պարագովիկ հայելիներ՝ պատրաստված արժաթագոծ ապակիներից կամ ալյումինազօծ մետաղե թիթեղներից:

Արեգակնային խոհանոց պատրաստելու ուղղությամբ նշանակալից աշխատանք է կատարել Աբբոտը Նա, իր կատարած փորձերի հիման վրա, Ամերիկայում, Մառնի-Վիլսոնի աստղադիտարանին կից կառուցել է արեգակնային ճաշարան:



Նկ. 9. Աբբոտի արեգակնային խոհանոցը (կառ. 1915 թ.):

Աբբոտի առաջին արեգակնային խոհանոցը, որ կառուցվել է 1910 թվականին, ունեցել է բավական հասարակ կառուցվածք: Նա կազմված է եղել 0,9 մետր լայնություն և 1,4 մետր երկարություն ունեցող պարաբոլիկ հայելուց՝ կազմված մի քանի կտոր արծաթաղօծ հարթ ապակիներից, որոնց կիղակետում տեղափորված է եղել կաթսան: Պարաբոլիկ հայելին վերևից ծածկված է եղել ապակիով, որպեսզի ճառագայթներն ազատ ներս թափանցեն, իսկ ներքեմ մասերը մեկուսացված են եղել ազրեստի շերտով, որպեսզի կուտակվող ջերմությունը շրջապատին չհաղորդվի: Դեպի Արեգակն ուղղված լինելու համար խոհանոցը ունեցել է շարժող մեխանիզմ:

Հետագայում, 1915 թվականին, Աբբոտին հաջողվել է պատրաստել ավելի մեծ և հարմար արեգակնային խոհանոց, որի հա-

յելին ունեցել է 2,1 մետր լայնություն և 3,0 մետր հրկաբռն-թյուն։ Հայելին եղել է ամբողջական, պատրաստված տրումի-նալոծ թիթեղից և կաթսան ավելի հաջող կերպով մեկուսաց-րած։ Հայելին և կաթսան եղել են անշարժ և զրված տրումի-առանցքին զուգահեռ։

Հայելին, Արեգակի շարժման ընթացքի համաձայն շարժելու համար, ունեցել է հատուկ ժա-մացուցային մեխանիզմ, որն աշխատել է էլեկտրական մոտորի միջոցով։ Հիշատակելի է, որ ջեր-մության կորուսաը փոքրացնելու նպատակով 1927 թ. Արբոտը որոշել է, արեգակնային խոհա-նոցի կաթսան պաշտպանելու հա-մար, սովորական սպակի խողո-վակներ օգտագործելու փոխառու օգտագործել երկպատանի ազակի խողովակներ, դուրս հանելով պա-տերի միջև եղած տարածության օղը։ Ըստ որում նրան հաջողվել Նկ. 10. Բուխտակի ուղեցուցիչ լուսացնողը է ջերմությունը 130—140°-ից հասցնել մինչև 170—180°-ի։

Այսպիսով, Արբոտի կառուցած արեգակնային խոհանուցն էր օրիգինալությամբ մեծ հետաքրքրություն է առաջացրել։ Այդ խոհանոցում պատրաստել են ամենաբարձր որակի զանազան իմու-րեղեններ, մասի և բանջարեղենի ճաշ։ Խոհանոցը հարժար է եղել նաև մրգեղենի և բանջարեղենի պահածոներ պատրաստելու համար։ Արեգակնային խոհանոցի առավելություններից մեկն էլ այն է, որ մի ամբողջ օր ճաշը կարող է տաք մնալ և, այդպիսով ամառվա շող ժամանակ խնայվում է վառելիքը։


Մեր Միության մեջ նույնապես արեգակնային խոհանոց պատրաստելու փորձեր են կատարել 1927 թվական։ Բուխտա-նը պատրաստել է առաջին արեգակնային խոհանոցը, որը նույն պես բարդ կառուցվածք է ունեցել։ Խոհանոցը պատրաստվել է



Խոհանոցը

պարաբոլիկ հայելուց՝ կազմված մի շարք հարթ, արծաթաղոծ ապակիներից:

Արեգակնային խոհանոցն օգտագործելու սովորությունն ավելի տարածված է Ամերիկայում, Հնդկաստանում, Եգիպտոսում, Աֆրիկայում և այլ տաք վայրերում:



Նկ. 11. Արեգակնային շարժիչ, որը ցուցադրվել է Փարիզում 1878 թ.

Արեգակնային ցարժիչներ

Արեգակի ճառագայթային էներգիան, բացի ջուր տաքայնելու կամ նուացնելու, ջուր թորելու, մրգեր չորացնելու համար օգտագործվելուց, օգտագործվում է նաև մեխանիկական աշխատանք կատարելու համար:

Մեխանիկական աշխատանք կատարելու ուղղությամբ հիշատակության արժանի են ֆրանսիական գիտնական Ավգուստ Մուշոյի պատրաստած՝ Արեգակի էներգիայով աշխատող ջրմուղ մեքենան, Սոլման դը Կոյի արեգակնային շարժիչը, որի միջոցով

ստացած էներգիայով աշխատել է տպագրական մեքենան, էրիկ-սոնի պատրաստած շղթաբաժն մեքենան, էնեսախ, Շումանի, Բոյ-սի արեգակնային շարժիչները և այլն:

1860 թվականից սկսած, մոտ 20 տարի այդ ուղղությամբ զբաղվել և մի շաբթ փորձեր է կատարել Մուշոն: Նրան հաջողվել է արեգակնային էներգիայով աշխատեցնել ջրմուղ մեքենա՝ որոշ խորությունից ջուր բարձրացնելու համար: Մուշոյի պատրաստած արեգակնային շարժիչն առաջին անգամ օգագործվել է Արքիրում, գետնի տակից ջուր բարձրացնելու համար, որից օգտվել են Ալֆիրում գտնվող Գրանսիական բանակը և տեղական բնակչությունը:

Մուշոյի պատրաստած արեգակնային էներգիայի աշխատող առաջին շարժիչն առաջին ջրմուղ մեքենան ջուրը բարձրացնել է մոտ 5 մետր:

Այդ ուղղությամբ շարունակելով փորձերը, նրան հաջողվել է մեկ բոպեռում 5 մետր խորությունից բարձրացնել մինչև 5.000 լիտր ջուր, իսկ ավելի ուշ՝ պատրաստել է այնպիսի արեգակնային շարժիչ, որը մեկ բոպեռում 10 մետր խորությունից բարձրացրել է 13.500 լիտր ջուր:



Նկ. 12. Արեգակնային շարժիչը (1815 թ.)

Մուշոյի պատրաստած Արեգակի էներգիայով աշխատող շատ հետաքրքրական տպագրական մեքենան, որ մեկ ժամում տպել է մինչև 500 օրինակ թերթ, անվանել են «արեգակնային թերթ» (Soleil Journal), Այդ շարժիչը 1878 թ. ցուցադրվել է Փարիզի միջազգային ցուցահանդեսում:

Այդ շարժիչի Արեգակի ճառագայթներն ընդունող և կաթուայի վրա անդրադարձնող մակերեսն ունեցել է կոնի ձև, պատրաստված առանձին հայելիներից, որը պտտվել է 45° թերություն ունեցող առանցքի շուրջը: Կոնի վերին մասի տրամագիծը եղել է 2,6 մետր, իսկ ներքեւի մասինը՝ մեկ մետր: Կաթսան

Եղել է տռանձին խողովակ՝ տեղափորված կոնի ներսում, պատման առանցքին գուգահեռ:

Բացի այդ, 1982 թ. Պիֆը նույնպես պատրաստել է արեւ գալնային շարժիչ՝ տպագրական մեքենա աշխատեցնելու համար: Նման արեգակնային շարժիչների նշանակությունը շատ մեծ է այն երկների համար, որտեղ ամառը գետնի վրա զրեթե ջուր չի լինում, կամ շատ սակավ է լինում:

Ամերիկայում Զոն երեկանը Արեգակի ճառագայթային էներգիայով մեխանիկական աշխատանք կատարելու համար պատրաստել է արեգակնային շարժիչ, որի ճառագայթներն ընտունող և կաթսայի վրա անդրադարձնող մակերեսն ունեցել է պարաբոլական գլանի ձև, կազմված ապակի արծաթազօծ հայելիներից: Այդ եղանակով ստացված էներգիայի միջոցով շարժման մեջ է դրվել 7 կիլովտ կարողություն ունեցող շողեներնատ:

Զոն երեկոնի պատրաստած արեգակնային շարժիչը, չնորսիվ իր հետաքրքրության, երկար տարիներ ցուցադրվել է ՆյուՅորքի ցուցահանդեսում:

Միջին Ասիայում նույնպես արեգակնային շարժիչներ են օգտագործվում ջուր բարձրացնելու, զաշտերը ուսուցելու և այլ նորմատակաների համար: Գետը է նշել, որ Արեգակի էներգիան մեխանիկական աշխատանքի վերածելու սարքերի պատրաստելու համեմատաբար ավելի բարդ է և կազմված է զժվարությունների հետ, այդ պատճառով էլ այդ սարքերը գեռևս զործնական լայն կիրառման չեն արժանացել:


Ամենայն վստահությամբ կարելի է հուսալ, որ մոտ առաջանամք հելիոտեխնիկայի զարգացումը հնարավոր կրարձնի Արեգակի ճառագայթային էներգիայի օգտագործումը երկրի վրա, բազմապիսի նպատակների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

հջ

1. Արեգակը որպես էներգիայի աղբյուր	3
2. Պատմական ընդհանուր ակնարկ Արեգակի էներգիայի օգտագործման մասին	11
3. Արեգակի էներգիայի օգտագործումը ջուր տաքացնելու համար	16
4. Արեգակնային չորանոց	28
5. Արեգակնային ազգային թուրակ	34
6. Արեգակնային խոհանոց	37
7. Արեգակնային շարժիչներ	40

Պատ. խմբ. Բ. Մարգարյան



Ստորագրված է տպագրության 22/II 1948 թ.

ԳՖ 00535, տիրաժ 3000, պատվեր 1314, հրատ. 277.

23/4 տպագրական մամուլ, 1 մամուլում 38400 տպ. նիշ.

ՀՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Աբովյան 104.

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0009708

— 58 —

ԳՐԱԸՆ 5 0.

